



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2018թ. սեպտեմբերի 28

N 181

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՂԿԱՀՈՎՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ ԼՈՒՍԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 162-րդ հոդվածների դրույթներով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը՝ **հրամայում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Ծաղկահովտի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջին կարգի մասնագետ Լուսինե Ներսիսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 2017 թվականի օգոստոսի 17-ից 2018 թվականի օգոստոսի 17-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 24 աշխատանքային օր տևողությամբ 2018 թվականի հոկտեմբերի 8-ից նոյեմբերի 8-ը ներառյալ:

Հիմք՝ Լ. Ներսիսյանի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ